ի կամենից գտնուիլը Շուէտացւոց բռնութեան արդիւնքն է, ոչ մէկ տեղ չհանդիպեցանք յիշատակութեան, մինչ իր նամակը կ'ըսէ զայս։ Այդ տեսակէտով՝ յայտնի է՝ իր կենաց շուրջ նոր լուսաբանուած ծանօթութիւն մ'է այդ։ Նամակն ուղղուած է առ Մխիթար Աբբայ՝ երբ դեռ նա Մեծոն էր։

Ա հաւասիկ.

Ամենապատիւ Տէր և Հղբայր ի Քրիստոս

1707 Յունվ. ի. ի Կամենից

Զգրեալսդ Յունիսի ժե. յամի ՏՆ ոչե [1705] ընկալայ յամին ՏՆ (ռ)չզ [1706] ի փետր. ժզ. և զի յայնժամ ոչ պատասխանեցի, առբասրել կարէին զիս առ Ամենապատուութիւնդ նախ անբախտն դիպուած Սվէտացւոց բռնութեանն[1]. յորմէ խուսել հարկեցայ մինչև ցփօսօլիայ, ուր ոչ դիւրապէս տրէին առիթք յայնժամ սուրհանդակաց. նաև գիրք բնականք ծերութեան. տկարութեան բնածնի, նուազութեան աչաց և այլք անդրամարտութիւնք ներքնոց և արտաքնոց զգայութեանց, արտագործութիւնք այսր տիոյ։ Զի մի սակայն բծիւ տմարդութեան փաղանչանիցէի յանծանօթիցդ իմոց բարուց, յօժարեցայ արդ սակաւուք պատասխանել, թէ և անագան։

Ի գրեցելոցդ, վերաքաղեցի... զերկու ինչ։ Նախ զնախանձ գովելի, և զգովելագոյն դիտաւորութիւն Հղբայրութեանդ, իսկ և զեզերեցումն կամի ամենախոհեմ և լի Առաքելականաւ Սիրով, զոր սկզբնաւորեալդ է նայդմ Դեկոզ. առ ի լինել զօրավիգ ճշդութեան և նպաստ նորին սերեցման ի մերազնեայս, աշխատասիրութեամբ Աշակերտեցելոցդ։ Զորս նախապետաբար հիմնես քաջ յԱռաքինութիւնս աստուածայրականս, զի զովելաբար զարգանայցեն յոգիս, և զարտագործութիւնս պտղաւէտս Առաջադրութեանդ բարւոյ՝ բողբոջեսցեն, և մարգես զնոսա, զի զառս ամենեսին ուղղաւորիցեն ի փառս Աստուծոյ, և ի փրկութիւն հոգւոց մերձաւորաց. և ապա երկրորդաբար զգիտութիւնս իմաստից վսեմագունից չամբել վարանիս նոցին. խնդապէս ճանաչելով թէ յոգիս առաքինասէրս չեշտակի ներամտեն հանճարք պէսպիսեաց գիտութեանց, և նոյնք ինքեանք յարմարագոյնք լինին յընդունակութիւն նոցա. իսկ և խոկալով բարւոք, թէ գիտութիւնք Սխօլաստականք, թարց ներհմտութեան ոգեկանաց իմաստից, համեմատիցին մարմնոյ՝ առանց հոգւոյ, կամ Պատկերի նկարեցելոյ, որ ապացուցանէ արդեօք զնախատիպն՝ ըստ նիւթոյ, այլ զներգործութիւն իմն կենդանական ոչ կարէ վարժել, նկրտիս ամենևին. զի երկաքանչիւրն չարունակեցեալք համանգամայն յոգիս Աշակերտեցելոցդ՝ առնիցեն զնոսա կրկնապատկի պատուոյ և հետևապէս նոյնքանոյ պսակի՝ համարժանս, ըստ Առաքելոյն զգացման, որպէս զի բանիւ գիտութեան, և օրինակաւ Առաքինութեանց՝ յառաջադէմք լինիցին ժողովրդեանն Աստուծոյ։ Ընտրողաբար ուրեմն նախադասես զիմաստն ոգեւոր՝ նիւթականին, ըստ Առածին այնմ հռչակավիպի. Առաւել ուսուցցաւի վարուց քարիոքին, քան բանից վարդապետութիւն։ Զայսոսիկ և զայլս յոգունս Առաջադրութեանդ զգացմունս ներազնելով՝ ոչ միայն դրուատեցի զարարդ, այլ և փաղաքացուցի յիս նինքեան առաւել քան զսովորականն, չերմապէս և անդուլ աղօթել վասն Հղբայրութեանդ, և Աշակերտելոցդ, որ և առնեմ իսկ ներգործապէս, զի ի դմին յամիցէք և օր ըստ օրէ աճիցէք ի զօրութենէ ի զօրութիւն։

---

1. *Որ ամէն կողոպուտ և չարիք հասցնելէ վերջ ի Լէժոլիս՝ յափշտակեր էին նաև իր գրքերը, զորս կազմեր էր Ս. Ժողովէն ստացած հազար սկուտով, ինչ որ տասը տարիէ ի վեր իբր եպիսկոպոս դեռ չէր առած, Որովք (այսինքն հազար սկուտով) զոմիսք (գրոց) գեղեցիկ կազմեաց. զոր յափշտակելով ապա Շվետացիք, խափանեցան գործ նորա («Կամենից» էջ 144)։*